

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.089

Ց Ի Ն Գ Ո Վ Ա Տ Ո Վ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1926
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՀՊԻ

334.5
Ց-54

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

15 JAN 2010

Ն. Ա. ՑԻՆԳՈՎԱՏՈՎ

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

(ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՏԵՂԵԿԱՑՈՒ)

12292.57

ԵՐԵՎԱՆ—1926 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. 326բ. պատվեր 1908 Տիր. 2500

ԳԼՈՒԽ 1

ԻՆՉՈՒ ՊԻՏԻ ԻՄԱՆԱԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոոպերատիվների անդիտակից անդամները կարծում են, վոր կոոպերատիվի կանոնադրությունը պիտի իմանան միայն նրանք, ովքեր ընտրվում են վարչության կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Հաճախ կարելի յե հանդիպել վարչությունների և վերստուգիչ հանձնաժողովների այնպիսի անդամների, վորոնք կարծում են, թե կանոնադրությունն իմանալը՝ հաշվետարի գործն է: Վերջապես հաշվետարներն ել շատ հաճախ կարծում են, վոր կանոնադրության բոլոր նրբությունները կարող են վերլուծել և ըմբռնել յերբեմն-յերբեմն քաղաքից յեկող կոոպերատիվ հրահանգիչները միայն:

Ըստ այս տեսակետի՝ կոոպերատիվների կանոնադրությունը վոչ անհրաժեշտ, վոչ ել ուշադրության արժանի մի բան է, կամ այնքան խրթին մի բան, վոր հասարակ մահկանացուներին մատչելի չի. ինչ ասել կուզի, վոր այս տեսակետը միանգամայն սխալ է:

Զե՞ վոր յուրաքանչյուր քաղաքացի՝ հենց կոոպերատիվին անդամագրվելիս՝ տալիս է ստորագրություն, վորտեղ ասված է. «պարտավորվում եմ յենթարկվել ինձ հայտնի կանոնադրության կանոններին»: Հետևապես՝ վոչ միայն կոոպերատիվի անդամները, այլ և բոլոր նրանք, ովքեր նրա մեջ են մտնում՝ պիտի իմանան կոոպերատիվի կանոնադրությունը: Առ-ավել ևս կանոնադրությունը պիտի իմանան վարչության ու վերաստուգիչ հանձնաժողովի անդամները և կոոպերատիվի ծառայողները:

Ցեվ ահա թե ինչու համար պիտի իմանան.—կանոնադրությամբ են վորոշվում կոոպերատիվի ամբողջ կյանքն ու գործունեությունը, կոոպերատիվի անդամների իրավունքներն ու պարտականությունները, կոոպերատիվ տնտեսության կառավարության ձևերը, որենքով կոոպերատիվին թույլատրված նախաձեռնումների սահմանները և այլն:

Ինչպե՞ս կարող է կոոպերատիվի անդամը չիմանալ այդ բոլորը, յեթե իրոք նա ցանկանում է լինել իսկական կոոպերատոր,

յեթե նա ցանկանում է կոոպերատիվի բոլոր գործերում կենդանի մասնակցություն ունենալ:

Չե՞ վոր նույնիսկ այն ժամանակ, յերբ յերկու կամ յերեք հոգի միանում են՝ ընդհանուր ուժերով մի փոքրիկ գործ անելու համար, նրանք նույնպես ձեռնարկվելիք գործի և նրա իրագործման միջոցների մասին նախորոք միմիանց հետ համաձայնության են գալիս ու պայմանավորվում են: Իսկ յերբ ընդհանուր տնտեսական մի խոշոր գործ կատարելու համար պիտի միանան շատ մարդիկ,—ապա այդ դեպքում անհրաժեշտ է, վոր նրանք վոչ միայն միմիանց հետ պայմանավորվեն, այլ և գրի առնեն այդ պայմանի հիմնական կետերը:

Վորպեսզի սպառողական ընկերության կանոնադրությունն ընդունվի, դրա համար հարկավոր չէ, վոր ընկերություն կազմակերպողները նորից մտածեն, թե իրենց կանոնադրության մեջ ի՞նչ գրեն և ինչպե՞ս գրեն: Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը 1924 թ. նոյեմբերի 21-ին հաստատել է սպառողական ընկերությունների այսպես ասած՝ «Որինակելի» կանոնադրությունը:

Ընկերության հիմնադիրներին մնում է այդ «Որինակելի» կանոնադրության մեջ մտցնել միայն մի քանի մանրամասնություններ (ընկերության անունը, նրա վարչության տեղը, մուտքի և փայավճարների գումարները և անդամների՝ ընկերության գործերի նկատմամբ ունեցած՝ պատասխանատվությունը):

Ընկերության հիմնադիրներն ու նրա անդամները պիտի ուսումնասիրեն կանոնադրությունը: Այդ բանում նրանց ոգնելու ի՞նչ այս գրքույկը:

Սպառողական Ընկերության Որինակելի կանոնադրությունը բաղկացած է յոթ գլխից («բաժիններից»).—Ընդհանուր կանոնադրություն, ընկերության կազմն ու նրա գործունեության շրջանը, անդամների իրավունքներն ու պարտականությունները, ընկերության գործերի ստուգում, հաշվապահություն և հաշվետվություն, վաստակի բաշխում ու վնասների չիջեցում, ընկերության գործունեության դադարեցում, նրա միացումն ուրիշ ընկերությունների հետ:

ԳԼՈՒԽ 2.

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆՐԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերբ միասին մի վորևե գործ անելու համար մի քանի հոգի միանում են, ապա ամենից առաջ նրանք պայմանավորվում են, թե իրենք ինչո՞ւ համար են միանում, միասին ի՞նչ գործ պիտի անեն և իրենց միությունն ի՞նչ նպատակ է հետապնդելու:

Բնական է ուրեմն, վոր սպառողական ընկերության կանոնադրության առաջին հոդվածում խոսվում է այն մասին, թե ընկերությունն ինչու համար է հիմնվում: Սպառողական ընկերությունը ծառայում է իր անդամների տնտեսական ու սպառողական կարիքներին և,—սոցիալիստական շինարարության սկզբունքների իրագործման նպատակով, կոոպերատիվ փոխադարձ ոգնությամբ—նպաստում է իր անդամների տնտեսական բարեկեցությանն ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Այսպիսով՝ նոր հիմնադրվող սպառողական ընկերության, կամ արդեն իսկ գոյություն ունեցող ընկերության մեջ մտնող անդամները միանում են, վորպեսզի ավելի լավ բավարարեն իրենց տնտեսական կարիքները, վորպեսզի միասին կատարած գումարների միջոցով ապրանքներն ու տնտեսական անհրաժեշտ իրերը ստանան, վորպեսզի լավագույն պայմաններով սպառեն իրենց տնտեսություններից ստացած մթերքները (ցորեն, յուղ, ձու, հում նյութեր և այլն):

Սակայն իրենց նյութական և կուլտուրական կյանքի բարեկեցության բարձրացման համար համախմբվելով կոոպերատիվի շուրջը, կոոպերատիվի անդամները չպիտի մտածեն՝ թե իրենց կը հաջողվի ոգտվել ուրիշների միջոցներից և ուժից, նստելու համար վորևե մեկի վզին և այս ձևով գնալու դեպի այն յերկրները, ուր հոսում են կաթնագետեր:

Վո՛չ: Կոոպերատիվի անդամներն իրենց բարեկեցությունը կարողանում են բարձրացնել միայն նրանով, վոր նրանք միացնում են իրենց ուժերն ու միջոցները՝ վոչ վոքի չշահագործելով, այսինքն՝ վոչ վոքի չեն հարկադրում իրենց համար աշխատելու:

Այս է հենց կոոպերատիվ փոխադարձ ոգնությունը: Իսկ կոոպերատիվ փոխադարձ ոգնության հիմնական նպատակն է՝ ձեռքբերել իրականացնելու սոցիալիստական շինարարության սկզբունքները, հակառակ կապիտալիստների միության, վորի միակ նպատակն է՝ հարյուրավոր ու հազարավոր մարդկանց աշխատեցնելով մի քանի հարյուր հարուստների համար, վոր հարուստներն ել ավելի հարստանան:

Կանոնադրության հետևյալ (2-րդ) հոդվածում խոսվում է այն մասին, թե սպառողական ընկերությունն առաջին հոդվածում մատնանշած նպատակների իրագործման համար ի՞նչ միջոցների կարող է ձեռնարկել:

Այստեղ խոսվում է, թե ընկերությունը կարող է արդյունաբերական ու գյուղատնտեսական մթերքների առևտուր անել, առևտրություններ համար զանազան անհրաժեշտ ձեռնարկություններ, ինչպես որինակ՝ վարձակներ, վերանորոգության արհեստանոցներ շինել և այլն, կարող է հում նյութեր հավաքել ու վերամշակել, կատարել զանազան գործվածքների արտադրություն, կարող է հիմնել թեյարաններ, ճաշարաններ, հիվանդանոցներ, մանկատներ, դպրոցներ, գրադարաններ և այլ կուլտուրապատվորական հիմնարկություններ: *)

Այսպիսով, ուրեմն, սպառողական ընկերությունը հնարավորություն ունի ընդգրկելու բանվորների ու գյուղացիների վողջ տնտեսական կյանքը: Սակայն պիտի նկատի ունենալ, վոր սպառողական ընկերության հիմնական ու իրական նպատակն է, այնուամենայնիվ, առաջին հերթին բավարարել իր անդամների համար լայն գործածության նշանակություն ունեցող ապրանքների կարիքը. (աղ, նաֆթ, լուցկի, մանուֆակտուրա, կոշիկ և այլն)

*) Սպառ. Ընկեր. Որինակելի կանոնադրության 3-րդ կետի 2-րդ հոդ. խոսվում է այն մասին, վոր սպառողական ընկերությունը փոխառություններ տալու և այլ վարկային գործարքներ կատարելու համար կարող է բանալ վարկային բաժանմունքներ. այժմ ընդունված է, վոր փոխառություններ տալու գործով պիտի զբաղվեն միայն վարկային ընկերությունները, իսկ սպառողական ընկերությունները դրանով չպիտի զբաղվեն. դրա համար սպառ. ընկերության կից վարկային բաժանմունքներ հիմնելու կարիք չկա:

Մնացյալները, համենայն դեպս, հանդիսանում են կողմնակի նպատակներ. այսինքն՝ այնպիսիք, վորոնք կարելի է իրագործել միայն այն ժամանակ, յերբ հիմնականն ավելի կամ պակաս չափերով կայուն ու լավ հիմքերի վրա է դրված:

Կանոնադրության առաջին գլխի մնացյալ հոդվածներում խոսվում է այն մասին, վոր սպառողական ընկերությունը կարող է գույք դնել ու վաճառել, պայմանագրեր կնքել, մուրհակներ ընդունել, տալ ու դեղջել, հայցեր հարուցել ու դատական պատասխանատվության կանչել, (հոդ. 4).—այսինքն՝ ինչպես ասում են, նա «իրավաբանական անձի» իրավունք ունի,—վոր ընկերությանն իրավունք է տրվում սպառողական և իր նպատակներին համապատասխանող այլ միություններին և ընկերություններին անդամագրվել (հոդ. 6), վոր ընկերությունը կարող է իր կնիքն ունենալ (հոդ. 7): Այս բաժնում խոսվում է նաև այն մասին, վոր ընկերությունն իր հանձն առած պարտավորությունների նկատմամբ պատասխանատու է իր ամբողջ գույքով, բացի այդ՝ նաև իր անդամների գույքով, նրանց լրացուցիչ պատասխանատվությունների սահմաններում (տե՛ս չարունակության մեջ):

Վերջապես, կանոնադրության առաջին գլխի վերջին հոդվածում (8-րդ) մատնանշվում է սպառողական ընկերության վարչության բնակավայրը:

ԳԼՈՒԽ 3.

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախընթաց գլխի սկզբում ասվեց, վոր սպառողական ընկերությունը հիմնվում է, վորպեսզի նրա անդամներն իրենց ուժերը և միջոցները միացնելով, սակայն բնավ յերբե՛ք ուրիշների ուժերն ու միջոցները չահագործելով, կոոպերատիվ փոխադարձ ոգնության միջոցով, կարողանան բարձրացնել իրենց բարեկեցությունը:

Հետևապես՝ սպառողական ընկերության մեջ տեղ չպիտի ունենա նա, ո՛վ ուրիշի աշխատանքով է ապրում, ո՛վ իր սեփական բարեկեցությունն ուրիշի կարիքի վրա է կառուցում: Սակայն

ինչպե՞ս հանդուրժել այդպիսի մարդկանց։ Դրա համար կա մի հարարակ, սակայն ճշգրիտ միջոց։ Այս կամ այն կերպ ուրիշի հաշվով ապրող բոլոր քաղաքացիներին Սորհրդային իշխանությունը զրկել է խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունքից։

Ցեվ ահա՝ ըստ Սորհրդային Հանրապետության Սահմանադրության, ընտրողական իրավունքից զրկված այդ քաղաքացիները, միևնույն ժամանակ համաձայն կանոնադրության 9-րդ հոդ., զրկվում են նաև սպառողական ընկերության անդամ լինելու իրավունքից։

Մնացած բոլոր քաղաքացիները, գյուղացիները, բանվորները, ծառայողները, արհեստավորները, տնայնագործները, որոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում, կարող են ընկերության անդամ լինել։ Ձե՞ վոր, վորքան շատ լինի ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխղճությամբ կատարող անդամների թիվը, այնքան ավելի լավ կը լինի թե ամբողջ ընկերության համար, և թե յուրաքանչյուր անդամի համար առանձնապես։ Վորքան շատ լինին անդամների թիվը և նրանցից գանձվող փայավճարներից գոյացած միջոցները, այնքան էլ ապրանքը նրանց վրա եժան կը նստի, այնքան էլ ընկերությունը հաջողությամբ կարող է սպառել իր անդամների տնտեսություններից ստացված մթերքները, այնքան էլ նա կարող է լավ հիմքերի վրա դնել կուլտուր-լուսավորական գործը և այլն։ Դրա համար էլ, ի հարկե, անհրաժեշտ է, վոր ընկերության անդամները լինեն գիտակից, լավ իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները։

Կանոնադրությամբ թույլատրվում է, վոր 16—18 տարեկան քաղաքացիները նույնպես լինեն ընկերության անդամներ, այսինքն այնպիսիք, վորոնք իրավունք չունին խորհուրդներում ընտրվելու միայն այն պատճառով, վոր նրանք փոքր են։ Սակայն ընկերության մեջ այդպիսի անչափահաս անդամները չեն կարող ոգտվել սպառողական ընկերության վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ ընտրելու և ընտրվելու իրավունքից։ Սպառողական ընկերությունն առանձին մարդկանց միություն է, ուստի նրա կազմի մեջ, վորպես անդամներ, չեն կարող մտնել արտելները, կոոպերատիվները և այլ «իրավաբանական անձինք»։

Գավառներում դեռ ևս շատ կոոպերատիվների անդամ են համարվում զանազան կազմակերպություններ· որինակ՝ փոկը, գյուղխորհուրդը, արտելները և այլն։ Որենքով կոոպերատիվներին անդամագրվել կարող են բացառապես առանձին-առանձին անհատները և վոչ յերբեք խմբերը կամ կազմակերպված կոլլեկտիվները։ Այն կոոպերատիվները, վորոնք դեռ ևս իրենց շարքերում ունին առանձին խմբերի կամ կոլլեկտիվների ձևով անդամներ, պիտի «զոման յենթարկվեն»՝ համաձայն որենքի։

Ինչպես սպառողական ընկերության մեջ մտնելը, նույնպես և ընկերությունից դուրս գալը միանգամայն կամավոր է։ Դրա համար հարկավոր է ընկերության վարչությանը դիմում տալ։

Ընկերությունն իր ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է հեռացնել անդամներին, սակայն նկատի ունենալով հետևյալ հիմունքները· անդամի՝ ընկերությանը վնասող գործունեության, ընկերության կանոնադրության խախտման կամ՝ ընկերության նկատմամբ որենքով ու կանոնադրությամբ սահմանված, իր պարտականությունները առանց հարգելի պատճառի չկատարելու համար։ Ընկերության անդամությունից հեռացված քաղաքացին, նորից, վորպես ընկերության անդամ, կարող է ընդունվել միայն ընդհանուր ժողովի վորոշման համաձայն։

Ընկերության անդամներն ըստ կանոնադրության, ի՞նչ պարտականություններ ունին։

Սպառողական ընկերությունը ստեղծվում է, վորպեսզի ծառայի իր անդամների սպառողական ու տնտեսական կարիքներին, իսկ դրա համար ամենից առաջ հարկավոր են միջոցներ։ Քանի վոր սպառողական ընկերությունն իր անդամների կարիքները բավարարելու յե կոոպերատիվ փոխադարձ ոգնության միջոցով, ապա՝ այդ միջոցներն էլ ամենից առաջ պիտի տան ընկերության անդամները։ Այդ միջոցներ տալը նրանց առաջնադույն պարտականությունն է։

Կանոնադրության 11-րդ հոդ. համաձայն, ընկերության անդամները պարտավոր են վճարել մուտքի վճար ու փայավճար, վորի չափը սահմանում է ընկերության ընդհանուր ժողովը։ Ըստ դեկրետի՝ սպառողական կոոպերացիայի փայավճարը՝ 5 ռուբլուց և մուտքի վճարը՝ 50 կոպեկից բարձր լինել չի կարող։ Փայավճարի այս սահմանափակումն արված է այն նպատակով, ինչ նպատակով էլ ընտրողական իրավունքից զրկված քաղաքացիներին չի թույլատրվում ընկերությանն անդամագրվել—վորպեսզի սպառո-

ղական ընկերության մեջ չահագործող հարուստների կողմից ճընչում, բանություն տալի չունենա և վորպեսզի հնարավորություն տրվի ընկերությանն անդամագրվելու նույնիսկ ամենաչքավոր բաղաքացիներին:

Փայավճար պիտի սահմանել 3—5 ռուբլի, քանի վոր քիչ չափով նշանակված փայավճարն ընկերությանը հնարավորություն չի ընձեռի իր գործունեությունը ծավալելու այնպես, ինչպես հարկավոր է:

Ընկերության անդամները բացի մեկ պարտավորեցուցիչ փայից կարող են ունենալ նաև կամավոր լրացուցիչ փայեր: Սակայն այդ լրացուցիչ փայերը նրանց նախապատվություններ, արտոնություններ չեն տալու վոչ ընկերության գործերի կառավարչության մեջ և վոչ էլ ընկերությունից առանձնապես ոգտվելու համար:

Կարող են հարցնել, թե հապա էլ ի՞նչ չահ կա լրացուցիչ փայեր մուծելուց: Շահ կա և այդ չահն անկասկած է. լրացուցիչ փայավճարների համար (ինչպես նաև հիմնական պարտավորեցուցիչ փայերի համար) ընկերության փայատերերին տոկոսներ և վճարում: Բացի այդ՝ լրացուցիչ փայավճարներով հարստացնելով իր ընկերության միջոցները, նրա անդամները դրանով իսկ հնարավորություն են ընձեռում ընկերությանը լավագույն կերպով տանելու իր տնտեսությունը, հետևապես նաև՝ լավագույն կերպով բավարարելու փայատերերի կարիքները:

Ընկերության չքավոր անդամներին՝ փայավճարներ մուծելու դյուրություններ տալու համար կարող են պայմանաժամեր նշանակվել: Ընկերությունից դուրս գալու դեպքում՝ անդամին վերադարձվում է իր փայավճարը. մուտքի վճարը չի վերադարձվում և վոչ մի դեպքում:

Այսպես, ուրեմն, սպառողական ընկերության անդամի առաջին պարտականությունը՝ մուտքի և փայի վճար մուծելն է:

Ճիշտ է ընկերության մեջ մտնող քաղաքացիները կարող են նրա անդամ համարվել միայն մուտքի վճարը մուծելու վարկյանից իսկ, սակայն, մուտքի վճար տալիս՝ նրանք պարտավորվում են մուծել նաև փայավճար՝ թեկուզ մաս-մաս, վորոշ ժամանակի ընթացքում և յեթե նրանք այդ չեն անի, ապա ընկերությունից կը հեռացվեն:

Սակայն, նույնիսկ այն դեպքում, յերբ սպառողական ընկերության անդամների թիվը բավականաչափ շատ է և փայավճարներն էլ նշանակված են ամենաբարձր չափով, այնուամենայնիվ՝ գործը հաջողությամբ տանելու համար, ընկերության միջոցներն անբավարար կը լինեն, ուստի ընկերությունն անխուսափելիորեն դրամով կամ ապրանքով փոխառություն պիտի կնքի: Բայց, վորպեսզի բանկը կամ առևտրական հիմնարկությունը սպառողական ընկերությանը վարկավորեն, նա պիտի վերոհիշյալներին ապահովություն տա, և վորքան մեծ լինի ներկայացրած ապահովությունը, այնքան էլ նա կարող է շատ վարկ ստանալ:

Այդպիսի ապահովությունը կարող է լինել այն, վոր ընկերության անդամները պարտավորվում են վոչ միայն իրենց փայավճարներով, այլ և իրենց սեփական դույքի մի մասով ծածկել ընկերության կրելիք վնասները: Իրենց դույքի այդ մի մասով ապահովելը կոչվում է անդամների՝ ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունների՝ լրացուցիչ պատասխանատվություն: Լրացուցիչ պատասխանատվությունը սահմանվում է պարտավորեցուցիչ փայից յերեք, հինգ, տաս և այլն անգամ ավելի: Այսպես, որինակ՝ յեթե փայավճարը սահմանված է 5 ռուբլի, իսկ լրացուցիչ պատասխանատվությունը տասն անգամ ավելի, ապա յուրաքանչյուր փայատեր ընկերության նկատմամբ ունեցած պարտավորության համաձայն, բացի մուծած 5 ռուբլուց, պատասխանատու յե նաև 50 ռուբլով:

Լրացուցիչ պատասխանատվության համար պարտավորեցուցիչ փայի 10-նապատիկից ավելին սահմանել չի կարելի, վորովհետև ավելի մեծ չափով սահմանված պատասխանատվությունը կարող է անդամներին վախեցնել և հրաժարեցնել ընկերությունից հեռանալ:

Այդ հիսուն ռուբլին փայատերերը չպիտի մուծեն սպառողական ընկերության գանձարկղը, և առհասարակ նրանք այդ գումարը յերբևիցե չեն էլ վճարելու, յեթե կոոպերատիվի գործերը կանոնավոր են գնում: Սակայն, յեթե կոոպերատիվի գործերը վատ գնան, ապա կարող է պատահել, վոր փայատերերը հարկադրված լինեն վճարել լրացուցիչ պատասխանատվության գումարի կեսը կամ ամբողջը:

Լրացուցիչ պատասխանատվությունը վոչ միայն ապրանքությանը պիտի վախեցնի և ընկերությունից նրան հեռու պահի, այլ և ընդհակառակն, անդամ—փայատերերին ել ավելի պիտի

հարկադրի հետաքրքրվելու իրենց կոոպերատիվի գործերով, մասնակցելու նրա բոլոր ժողովներին, ոգնելու ընկերության աշխատանքներին, վարչության մեջ ընտրելու ավելի արժանավոր և ազնիվ հասարակական մարդկանց և այլն:

Նշանակում է՝ գիտակցական լրացուցիչ պատասխանատվությունը (*վորը լավ ընկերության մեջ, վորտեղ վայատերերը հասկանում են իրենց իրավունքները և պարտականությունները,— յերբեք չեն վճարելու*) և անդամների՝ դեպի իրենց ընկերությունն ունեցած շահագրգռությունը, կոոպերատիվի անդամի յերկրորդ և նույնիսկ շատ կարևոր պարտականությունն է:

Այսպիսով, ուրեմն, սպառողական ընկերությունների անդամների պարտականությունները խիստ նշանակալից են: Բայց ի՞նչ իրավունքներ ունին նրանք: Սպառողական ընկերությունների անդամների իրավունքները մի խոսքով կարելի յե ընորշել այսպես. սպառողական ընկերության անդամ-վայատերերը հանդիսանում են իրենց ընկերության լիակատար տերերը: Իսկ թե ընկերության անդամներն ինչպե՞ս են ոգտվելու իրենց այդ իրավունքներից— կը պատմվի հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ 4.

Ո՞Վ ՑԵՎ Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՍՏՈՒԳՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Յերբ յերկու կամ յերեք հոգի պայմանավորվում են միասին մի փոքրիկ գործ անել, ապա նրանց համար հեշտ է բոլոր մանրամասնությունները նախատեսել, և յեթե հենց գործի ընթացքում պիտի մի վորևե բան փոխել, դժվար չի լինի նրանց համար միասին մտածել ու անել: Սակայն, յերբ ընդհանուր գործի համար միանում են տասնյակներով ու հարյուրներով մարդիկ և յերբ ձեռնարկած գործը, վորի համար նրանք միանում են, տևում է տարիներով, այն ժամանակ բոլոր մասնակցողների համար շատ դժվար ու նույնիսկ անհնարին է զբաղվել ընդհանուր գործի բոլոր մանրամասնություններով:

Դրա համար էլ սպառողական ընկերության վարչությունը գտնում է վոչ թե նրա ընդհանուր ժողովը կազմող բոլոր անդամների ձեռքում, այլ ընկերության անդամներից ընտրված մարդկանց ձեռքում, վորոնք և կազմում են նրա վարչությունը

(հոդ. 24): Ընկերության բոլոր գործերի իրական տերն ու տնորենը, բոլոր եյական ու հիմնական հարցերի լուծողը հանդիսանում է նրա ընդհանուր ժողովը, իսկ վարչությունն ընկերության գործակատարն է, վոր կատարում է ընդհանուր ժողովի վորոշումները և նա պարտավոր է ընկերությանը հաշիվ տալ իր կատարած յուրաքանչյուր գործի, ընկերության կողմից իրեն վստահած յուրաքանչյուր կոպեկի համար:

Ընդհանուր ժողովը վորոշում է մուտքի և փայավճարների չափը, ինչպես և լրացուցիչ պատասխանատվության սահմանը և փայավճարների վճարման պայմանաժամերը, հաստատում է ընկերության աշխատանքների ծրագիրը և յեկամուտների ու ծախքերի նախահաշիվները, քննում և հաստատում է վարչության հաշվետվությունը, բաշխում է ստացված զուտ վաստակը կամ սահմանում է վնասները չիջելու, հանգցնելու կարգը, մշակում է ընկերության վոչ անդամներին, ինչպես նաև վարկով բաց թողնվելիք ապրանքների պայմանները, վորոշում է փոխառություններ կնքելու և ավանդներ ընդունելու ընդհանուր պայմանները, ինչպես և ավանդների ու փոխառությունների տոկոսների չափը: Վորոշում է հետևյալ հարցերը.— գրավներ ընդունելու և չենքեր գնելու, կառուցվածքների պայմանագրեր կնքելու, հատուկ գումարներ ստեղծելու և ծախսելու, ընկերությունից անդամներին հեռացնելու, ընկերության այլ կազմակերպությունների մեջ մտնելու, կանոնադրության փոփոխության ու լրացման, ընկերության այլ կազմակերպությունների և ընկերությունների հետ ձուլվելու, նրա յերկու կամ ավելի ինքնուրույն ընկերությունների վերածվելու, ընկերության գործունեությունը դադարեցնելու, վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի համար անդամներ ընտրելու և հարկը պահանջածին՝ պայմանաժամից առաջ վարչության անդամներին իրենց վարած պաշտոններից հեռացնելու, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին աշխատավարձ նշանակելու, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների վրա յեղած բողոքները քննելու հարցերը: Նաև լուծում է վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների գործունեության և թերացումների պատասխանատվության հարցերը, ներկայացուցիչներ և ընտրում մասնակցելու այն ընկերությունների ժողովներին, վորոնց անդամ է ինքը ընկերությունը,

ինչպես և ընտրում է ներկայացուցչություններ այլ դեպքերի համար (հոդ. 34)։

Վերոհիշյալ բոլոր հարցերից ամեն մեկը խոշոր նշանակություն ունի սպառողական ընկերության կյանքում, ուստի ընկերության անդամները, այդ հարցերից ամեն մեկի լուծմանը պիտի մոտենան մեծ ուշադրությամբ։

Ասենք՝ թե պիտի վորոշել մուտքի, փայավճարների և լրացուցիչ պատասխանատվության չափը։ Այստեղ սխալվելը հեշտ է։ Կարելի է կարծել, թե այդ վճարումների համար պիտի նշանակել ամենանվազագույն չափը և լրացուցիչի համար ամենաանչնչին բաղմապատիկը և ամեն ինչ լավ կը լինի և վոր ամենից գլխավորն է, անդամների թիվը ընկերության մեջ մեծ կը լինի։ Բայց այդ միանգամայն սխալ է։ Զսլիտի մոռանալ, վոր սպառողական ընկերությունը, եթե միջոցներ չունի, իր անդամներին վոչ մի ոգուտ տալ չի կարող։ Հետևապես, չի կարելի փոքր փայավճար նշանակել։ Պիտի ձգտել, վոր այդ վճարը մոտավորապես հասնի հինգ ռուբլու, և վորպեսզի սուղ կարողության տեր գյուղացիներն էլ հնարավորություն ունենան կոոպերատիվի անդամ լինել (և անհրաժեշտ է, վոր հենց նրանք լինեն կոոպերացիայի մեջ), պիտի նրանց փայավճարների մուծման համար պայմանաժամեր նշանակել կամ այնպես անել, վոր նրանց փոխարեն փայավճարներ մուծեն գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերությունները։ Այդպես պիտի վարվել նաև լրացուցիչ պատասխանատվության հետ. լրացուցիչ պատասխանատվությունն էլ այնպես պիտի վորոշել, վորպեսզի գյուղացիներին չվախեցնի և ընկերությունից չը-հեռացնի, և ընկերությունն էլ կարողանա, ինչպես հարկն է, զարգացնել իր գործունեությունը։

Հետո, վոչ անդամներին և ապառիկ ապրանք վաճառելու հարցի մասին։ Այս բոլորն ընդհանուր ժողովն անհրաժեշտորեն քննության պիտի առնի։ Ընդհանուր ժողովը վոչ միայն պիտի ասի թե՝ վոչ անդամներին պիտի ապրանք վաճառել կամ չվաճառել, այլ և պիտի վորոշի թե՝ ի՛նչ պայմաններով և ի՛նչ կարգով ընկերությունը վոչ անդամներին պիտի ծառայի։

Վարկով վաճառելու հարցը պիտի վորոշել խիստ զգուշությամբ. պիտի հիշել, վոր ապրանքով վարկ տալն ընդհանրապես վտանգավոր բան է և կարող է կոոպերատիվի վիճակն ու աշխատանքը բարդացնել։

Մնացյալ բոլոր հարցերն էլ, վոր ընդհանուր ժողովը պիտի լուծի, նույնպես լուրջ են և ուշադրության արժանի։ Ուստի կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ընդհանուր ժողովներին պիտի մասնակցի վոչ միայն նրա համար, վոր այդ իր շահն է պահանջում, այլ և նրա համար, վոր այդ նրա հասարակական պարտականությունն է։ Ընդհանուր ժողովի վորոշման յենթակա հարցերից յերևում է, վոր ընկերության բոլոր գործերի լիակատար տնօրենը հանդիսանում է ընդհանուր ժողովը։ Դրա համար էլ, ընկերության յուրաքանչյուր անդամ կենդանի մասնակցություն պիտի ունենա բոլոր ժողովներում ու վոչ մեկը ժողովից չպիտի բացակայի։ Վորպեսզի ընկերության յուրաքանչյուր անդամ նախորոք իմանա, թե յերբ են լինելու ընդհանուր ժողովները և ինչպիսի հարցեր են քննվելու այնտեղ, ընկերության վարչությունը, վոչ ուշ, քան ժողովից յերեք որ առաջ, խանութներում և ընկերության այլ հաստատություններում վակցրած հայտարարությունների միջոցով անդամներին հայտնում է ընդհանուր ժողովի, տեղի ու ժամանակի մասին (հոդ. 26)։

Քանի վոր չի կարելի հուսալ, թե ժողովին ներկա կը գտնվեն ընկերության բոլոր անդամները, ուստի ընդհանուր ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յեն բոլոր անդամների մի յերրորդը (հոդ. 27)։

Յեթե ժողովին ներկա չլինեն ընկերության բոլոր անդամների մի յերրորդը,—ապա յերկու շաբաթից վոչ ուշ՝ հրավիրվում է յերկրորդ ընդհանուր ժողովը, վորն՝ անկախ ներկա յեղողների թվից, համարվում է կայացած, և վորտեղ վարչությունն անդամներին ազդարարում է առաջին ժողովի հայտարարության մասին (հոդ. 28)։

Այդպիսով ուրեմն, ընկերության անդամները պարտավոր են խիստ զգուշությամբ հետևել, վորպեսզի ընկերության ժողովներից հետ չնկնեն, մանավանդ յերկրորդ անդամ տեղի ունեցողներից, վորտեղ անկախ ներկա յեղող անդամների թվից, կարող են լուծվել ամբողջ ընկերության համար վերին աստիճանի կարևոր հարցեր։

Ընդհանուր ժողովները հրավիրվում են վոչ պակաս, քան 4 անդամ տարեկան. նրանցից մեկ հրավիրվում է տվյալ որացույցային տարվա դեկտեմբերի 1-ից վոչ ուշ, քննության առնելու համար անցած գործառնական տարվա հաշիվները։ Վերստուգիչ հանձ-

նաժողովի կամ բոլոր անդամների մի տասնյերորդի պահանջմամբ, վարչությունը պարտավոր է, նման պահանջ ստանալու որվանից հաշված՝ յերկու շաբաթվա ընթացքում հրավիրել ընդհանուր ժողով, հակառակ դեպքում՝ ժողովը հրավիրում է վերստուգիչ հանձնաժողովը (հոդ. 25)։

Ընդհանուր ժողովներում հարցերը վորոշվում են բացարձակ քվեարկությամբ և ներկա յեղող անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ, բացառությամբ այն հարցերի, վորոնց վորոշման համար պահանջվում է ընկերության ներկա յեղող անդամների յերկու յերրորդի ձայների մեծամասնությունը։ Այդ հարցերն են.—կանոնադրության փոփոխումն ու լրացումը, անդամներին ընկերությունից հեռացնելը, ընդհանուր ժողովները լիազորների ժողովներով փոխարինելը*), վարչության կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամներին պատասխանատվության կանչելու և ընկերությունը փակելու հարցերը։

Ինչպես վերը մատնանշվեց, յերբ ընդհանուր ժողովները, ընկերության անդամների մի յերրորդի ներկա չլինելու պատճառով չեն կարող կայանալ, նշանակում է յերկրորդ ժողովը, վորը և անկախ ներկա յեղողների թվից՝ համարվում է կայացած։ Սակայն, յեթե ժողովը պիտի վորոշումներ կայացնի վերոհիշյալ հարցերի նկատմամբ, վորոնց վորոշման համար պահանջվում է ներկա յեղող անդամների յերկու յերրորդի ձայնը,—ապա յերկրորդ ժողովն էլ այդ հարցերը քննության կարող է առնել միայն այն ժամանակ, յերբ ժողովին ներկա յեն վոչ պակաս, քան ընկերության բոլոր անդամների մեկ յերրորդը։ Յեվ միայն ընկերության անդամների

*) Յերբ ընկերությունը դառնում է բազմանդամ և բաղկացած է լինում հինգ հարյուր, հազար ու ավելի անդամներից և այդ անդամներն ապրում են զանազան գյուղերում, յերբ բոլոր անդամների ընդհանուր ժողովներ գումարելը դառնում է անհնարին—այդ ժամանակ ընկերությունը կառավարվում է լիազորների ժողովով, այսինքն՝ ընկերության բոլոր գործերը կառավարելու համար նրա անդամների կողմից ընտրվածների ու լիազորվածների ժողովը։ Այդ լիազորներն ընտրվում են տեղերում, անդամների չրջանային ընդհանուր ժողովներում։ Այդ ժողովները վոչ միայն լիազորներ են ընտրում, այլ և նրանց հրահանգներ են տալիս, այսինքն՝ նրանց հանձնարարում են լիազորների ժողովներում կայացնել տալու այս կամ այն վորոշումը։

մի յերրորդի յերեք անդամ ընդհանուր ժողովներին չներկայանալու դեպքում, վերոհիշյալ հարցերի լուծելը թույլատրվում է, անկախ ժողովին ներկա յեղողների թվից։

Յեվ այդ միանդամայն հասկանալի յե. ամեն միջոց ձեռք պիտի առնել, վորպեսզի անդամների գեթ մի յերրորդը, ներկա լինի այն ժողովներին, վորտեղ կարող է վորոշվել այնպիսի մի հարց, ինչպես օրինակ՝ ընկերության կանոնադրության փոփոխելը կամ նրա գործունեության դադարեցնելը։

Այսպես ուրեմն, սպառողական ընկերության ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության բոլոր գործերի տերն ու տնտրեն։ Ու քանի վոր ամբողջ ընկերությունը չի կարող զբաղվել ապրանքներ գնելու և վաճառելու գործով, չի կարող վարել հաշվապահությունն ու հաշվետվությունը և այլն, ուստի ընդհանուր ժողովն այդ գործերը վարելու համար մի տարի ժամանակով ընտրում է 3–7 հոգուց բաղկացած վարչություն (հոդ. 39)։ Զարմանալի 3–5 հոգուց ավելի վարչություն ընտրել։

Բայց կանոնադրության (հոդ. 39) ընդհանուր ժողովը, փոխանակ վարչության անդամների, կարող է ընտրել մեկ հոգի կարգադրիչ, վորին և հանձնարարվում է վարչության բոլոր պարտականությունները։ Վորպեսզի այդ կարգադրիչը կարողանա վարել ընկերության բոլոր գործերը, նա պիտի հավատարմագիր ունենա։ Կարգադրիչին այդ հավատարմագիրը տալիս է ընդհանուր ժողովը նախագահությունը։

Վարչությունը մեկ կարգադրիչով փոխարինելու դեպքում՝ պիտի խիստ զգույշ լինել։ Վորովհետև այդ շատ պատասխանատու գործ է, ուստի նրա նկատմամբ այս կամ այն վորոշումը պիտի կայացնել կոոպերատիվների Միության՝ Հայկոոպի հրահանգչի հետ խորհրդակցելուց հետո միայն։

Յեթե ընկերությունը վարչության փոխարեն կարգադրիչ ունի,—ապա հատուկ ուշադրություն պիտի դարձնել վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքների վրա և հաճախակի հրավիրել ընդհանուր ժողովներ, վորպեսզի կարգադրիչն այդ ժողովներում կարողանա հաշիվ տալ ընկերության տիրոջը—նրա անդամների ընդհանուր ժողովին։

Վարչությանը հանձնարարվում է.—բոլոր առևտրական գործարքների վարելը, զանազան տեսակ պայմանագրեր և համաձայնություններ կնքելը, դրամներ ընդունելը, պահելն ու տալը,

12292-57

մուրհակներ տալն ու գեղջելը, ծառայողներ ընդունելն ու արձակելը, հաշվապահության վարելը, նախահաշիվներ, ծրագիրներ ու հաշվեմատյաններ կազմելը, ընկերության մեջ անդամներ ընդունելն ու նրանից այն անձնավորություններին հեռացնելը, որոնք զրկված են Խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունքից:

3–5 հոգուց կազմված վարչությունը վոչ ամեն դեպքում հնարավորություն կունենա ի կատար ածելու վերոհիշյալ բոլոր գործարքները, մանավանդ, յերբ կոոպերատիվի գործերն այնքան են ընդարձակվում, որ նրանց բավարարելու համար հարկավոր են տասնյակ և ավելի աշխատակիցներ: Այդ դեպքում վարչությունը վարձում է ծառայողներ, գործակալներ, հաշվապահներ և այլն: Սակայն այդ դեպքում ել այնուամենայնիվ վարչությունն ինքն է ընկերության առաջ պատասխանատու, նրա գործի հաջող կամ անհաջող ընթացքի համար: Ծառայողներն ել պատասխանատու յեն վարչության առաջ, յեթե նրանք վարչության հանձնարարած աշխատանքն ի չար են գործադրում: (Գործակատարն ապրանքի պակսորդի համար, հաշվապահն մատյաններն անկանոն պահելու համար և այլն):

Ընդհանրապես վարչությունը գործում է որպես ընկերության մշտական ներկայացուցիչ, նրա գործերը վարում է առանց հատուկ հավատարմագրի (հոդ. 37): Վորպեսզի ընկերությունն իրեն ապահովի վարչության անդամների կողմից իրենց իրավունքներն ի չարը գործադրելուց,—կանոնադրությունը հետևյալ միջոցներն է նախատեսնում.—

1. Ընկերության ընդհանուր ժողովի վորոշման համաձայն, վարչության յուրաքանչյուր անդամ կարող է պայմանաժամից առաջ իր պաշտոնից հեռացվել (հոդ. 39):

2. Վարչության անդամներ չեն կարող լինել (հոդ. 40). մոտիկ ազգականներ, ամուսիններ, հարազատներ, քույրեր ու յեղբայրներ, հայր ու վորդի և այլն:

3. Վարչության անդամներն իրենց իրավունքների խախտումով ընկերությանը պատճառած վնասների համար պատասխանատու յեն ամբողջ կազմով:

Սակայն պիտի նկատել, որ նախազգուշացնելու և վարչության գործունեությունից չարագործություններն արմատախիլ անելու համար ձեռք առած բոլոր միջոցները կարող են հեռանալ

միայն այն ժամանակ, յերբ ընկերության բոլոր անդամները վարչության գործունեությանը և առաջին հերթին նրա ընտրությանը կը վերաբերվեն լրջությամբ և ուշադրությամբ:

Ի՞նչ ոգուտ նրանից, որ վարչության անդամները դատարանով պատասխանատու կը լինեն ընկերությանը պատճառած վնասների համար: Ձե՞ որ մեծ մասամբ նրանցից ստանալու յել վոչինչ չի լինում, իսկ յեթե կա յել, ի՞նչ վերցնես, յերբ այնուամենայնիվ վարչության այդպիսի անդամներն իրենց վոճրագործ գործունեությամբ կամ անշնորհքությամբ կարող են ընկերությանն ահագին վնասներ պատճառել:

Ընկերության համար վարչություն ընտրելով, անդամները պիտի լավ իմանան, որ իրենց ընտրյալներին իրենք վստահում են և՛ հասարակական դրամագլուխներ, և՛ ապրանքներ, և՛ մնացյալ ամբողջ գույքը, որ հաջող ընտրված վարչությունը կը բարձրացնի ընկերության բարեկեցությունը, իսկ անհաջող ընտրված վարչությունը կարող է վոչ միայն վատնել ընկերության՝ նրան վստահած գույքը, այլ և ընկերության անդամներին կարող է կանգնեցնել լրացուցիչ պատասխանատվությունը մուծելու անհրաժեշտության առաջ: Դրա համար ել վարչության անդամ պիտի ընտրել այնպիսի մարդկանց, որոնց նկատմամբ ընկերությունը վստահ է՝ որ նրանք ի չարը չեն գործադրի ընկերության հավատն և ընդունակ կը լինեն վարելու այն գործը, որի գլխին նրանց կանգնեցնում է ընդհանուր ժողովը:

Սակայն որքան ել հաջող լինի վարչության ընտրությունը և որքան ել հաճախ նա իր բոլոր գործերի համար հաշիվ տա ընդհանուր ժողովին, այնուամենայնիվ ամբողջ ընկերությունը չի կարող ստուգել ու վերահասու լինել վարչության գործունեությանն այնպես, որ անդամների մեջ վոչ մի կասկած չընա, թե՝ վարչությունը գործերը տանում է կանոնավոր: Դրա համար ել ընդհանուր ժողովը վարչության գործունեությանը հսկելու, նրա գործերը քննելու և հաշիվները ստուգելու համար ընտրում է Վերստուգիչ Հանձնաժողով (հոդ. 45):

Ինքնին հասկանալի յե, որ վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել վոչ ընկերության վարչության անդամները, կամ նրա վարձու աշխատակիցները, ինչպես նաև նրանց ազգականները:

Վերստուգիչ հանձնաժողովը վոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ, ստուգում է ընկերության պատրաստի ապրանքներն ու

մյուս ունեցվածքները և վորոշում, թե վորքան է այն համապատասխանում մատյաններում ու վաստակագրքերում գրանցված նիերին, ստուգում է վարչության կազմած հաշիվները և նրանց նկատմամբ ընդհանուր ժողովին յեզրակացություններ տալիս։ Յեզրակացություններ և տալիս նաև վարչության կարևոր ձեռնարկումների և ընկերության անդամների՝ վարչության վրա տված բողոքների նկատմամբ։ (հոդ. 47)։

Վերստուգիչ հանձնաժողովը վարչության բոլոր անկանոն գործունեությունների նկատմամբ համապատասխան ցուցմունքներ է անում։

Յեթե վերստուգիչ հանձնաժողովը կանում է, վոր վարչության անդամներն ի չարն են գործադրում ընկերության վաստակությունը,—ապա նա ընդհանուր ժողով է հրավիրում և նկատած թերությունների մասին զեկուցում։

Վորովհետև վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը խոշոր նշանակություն ունի ընկերության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար, ուստի նրա անդամների ընտրությանն էլ պիտի վերաբերվել նույնպիսի լրջությամբ, ինչպես վարչության անդամների ընտրությանը։

ԳԼՈՒԽ 5.

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՅԵՂԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ Է ՇԻՋՈՒՄ (ՀԱՆԳՑՆՈՒՄ) ՎՆԱՄՆԵՐԸ

Մենք վերևում արդեն, վոր սպառողական ընկերությունը հիմնվում է, վորպեսզի ծառայի իր անդամների տնտեսական կարիքներին ու նպաստի նրանց նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման։ Սակայն անդամների նյութական-տնտեսական ու կուլտուրական կյանքի բարեկեցությունը բարձրացնելու համար հարկավոր են միջոցներ, ուստի բավական չէ, վոր հիսուն կամ հարյուր հոգի համաձայնության են գալիս հիմնելու սպառողական ընկերություն. վորպեսզի վերջինս կարողանա գործի անցնել, անհրաժեշտ են վորոշ միջոցներ։

Սպառողական ընկերության միջոցներն ամենից առաջ կազմում են անդամների փայերն ու մուտքի վճարները և, յեթե ընկերությունը վորոշ ժամանակ արդեն վաստակ է արել,—ապա նաև զուտ արդյունքի հատկացումներն ու այլ մուտքերը։

Մուտքի վճարները մնում են ընկերությանը, վորպես սեփականություն և չեն վերադարձվում անդամներին՝ վոչ ընկերությունից նրանց ինքնակամ հեռանալու և վոչ էլ հեռացնելու դեպքում։ Այդ վճարները կազմում են ընկերության հիմնական դրամագլուխը. վորը գլխավորապես պիտի ծախսվի ընկերության համար կահույք ձեռք բերելու, շենքեր գնելու կամ կառուցելու համար և այլն։

Բացի այդ՝ հիմնական դրամագլխով ծածկվում են ընկերության մնասները, յեթե այդպիսիք նա ունենում է։

Վորովհետև սովորաբար մուտքի վճարները փոքր են լինում, իսկ հիմնական դրամագլխով ընկերության բավարարելիք պահանջները կարող են շատ լինել,—ապա, ըստ կանոնադրության, ընդունված է, վոր ընկերությունն ամեն տարի իր ստացած զուտ արդյունքի 40 տոկոսից վոչ պակաս (ռուբլուց 40 կոպ.) հատկացնի հիմնական կապիտալին։

Յեթե ընկերությունն ամբողջ հիմնական կապիտալը չի ծախսել այն կարիքների համար, վորոնց համար նա նշանակված է յեղել,—ապա նա կարող է այդ գումարը դնել իր առևտրական գործարքների շրջանառության մեջ։ Սակայն այդ դեպքում նրա տոկոսներներն էլ պիտի հաշվել մոտավորապես այն չափով, ինչ չափով վոր բանկերը վճարում են դրույքներին։

Այսպիսով ուրեմն, ընկերության հիմնական դրամագլուխը կազմում են՝

1) Անդամների մուտքի վճարները,

2) Զուտ արդյունքից ամեն տարի 40 տոկոսի հատկացումները,

3) Այն տոկոսները, վոր հատկացվում են հիմնական դրամագլխի այն մասին, վորը գտնվում է ընկերության առևտրական շրջանառության մեջ (հոդ. 21)։

Փայավճարները կազմում են ընկերության փայատիրական դրամագլուխը, այսինքն այն դրամագլուխը, վորով ընկերությունը վարում է իր ընթացիկ առևտրական գործարքները (հոդ. 22)։

Ինչպես վերը մատնանշվեց, ընկերությունը փայավճարները պիտի վերադարձնի ինչպես ընկերությունից ինքնակամ հեռա-

ցող, նույնպես և նրանից հեռացվող անդամներին։

Սակայն այդ վճարներն անդամներին վերադարձվում են միայն ընդհանուր ժողովի կողմից այն գործառնական տարվա հաշվետվությունը հաստատելուց հետո, որը տարվա համար նրանք ընդունված են յեղել (հոդ. 18)։ Սա յել տրվում է այն նրկատառումով, որ յեթե ընկերությունն ըստ տարեկան հաշվետվության վնաս արած լինի, և յեթե այն ծածկելու համար ընկերության հիմնական դրամագլուխը չը բավի,—ապա վնասները ծածկվելու յեն փայավճարներից (հոդ. 59)։

Յեթե ընկերությունն ոգուտ է անում,—ապա փայավճարներին տրվում է այնպիսի տոկոս, ինչպիսին հատկացվում է հիմնական կապիտալի այն մասին, որը գտնվում է ընկերության գործերի շրջանառության մեջ։ Տարբերությունը միայն այն է, որ հիմնական դրամագլխին հատկացված տոկոսները մնում են ընկերությանը և գնում ի լրացումն հիմնական դրամագլխի, իսկ այն տոկոսները, որ հատկացվում են փայավճարներին—տրվում են փայատերերին և արդեն նրանցից է կախված ընկերությունից վերցնել այն, թե՞ թողնել, որպես լրացուցիչ փայ, դրույք, կամ հենց փոխանցել ընկերությանը, որպես նրա անբաժանելի սեփական միջոց։

Ասացինք, որ փայատերն իր փայավճարն ընկերությունից հետ չի կարող ստանալ, մինչև որ չհաստատվի տարեկան հաշվետվությունը. հետևապես՝ ընկերությունն ամբողջ տարվա ընթացքում կարող է հաստատապես հաշվի առնել, որ անդամներից ստանալու յեն փայավճարներ և գործի համար կարող է այդ փայավճարները նկատի ունենալ այն վստահությամբ, ինչ վստահությամբ որ նկատի յե առնվում հիմնական դրամագլուխը։ Այս վստահությունն ամրապնդվում է նաև նրանով, որ համաձայն Ռ. Ս. Հ. Մ. Ժողկոմխորհի 1924 թ. մայիսի 20-ի դեկրետի, փայավճարները չեն կարող վճարվել փայատերերի հարկերի ու տուրքերի և զանազան հաստատություններին ու անձանց ունեցած պարտքերի դիմաց (տե՛ս կանոնադրության հոդ. 12)։

Յուրաքանչյուր ընկերության համար բացի պարտավորեցուցիչ յերկու (հիմնական ու փայատիրական) դրամագլուխներից, ընկերությունն ընդհանուր ժողովի վորոշմամբ, կարող է կազմել նաև հատուկ դրամագլուխներ։ Դրա համար ընկերությունն իրավունք ունի.

1) Զուտ արդյունքից վորոշ մաս հետ դնել,

2) Անդամների համար (բացի փայերից ու մուտքի վճարներից) սահմանել հատուկ վճարներ,

3) Բաց թողնվող ապրանքների արժեքների (որ. չքեղության առարկաների) վրա հատուկ հավելումներ անել,

4) Քաղաքացիներից ընդունել նվիրաբերություններ՝ պահպանելու ընկերության այն ձեռնարկությունները, վորոնց համար ստեղծվում է հատուկ դրամագլուխը (հոդ. 23)։

Մենք արդեն 2-րդ գլխում ասացինք, թե վորքան զանազան կարող են լինել սպառողական ընկերության նպատակները։—նա կարող է իր անդամների համար անհրաժեշտ ապրանքների առևտուր անել, անդամների տնտեսությունների համար ոժանդակ ձեռնարկություններ հիմնել և այլն։ Սակայն սպառողական ընկերությունների միջոցները, սովորաբար, այնքան փոքր են լինում, որ շատ հաճախ նրանք, ինչպես հարկն է, չեն կարողանում ընդարձակ կերպով դնել հասարակական տնտեսության հիմնական ճյուղերը—կոոպերատիվ առևտուրը։

Դրա համար էլ, թեև սպառողական ընկերությունների համար պարտավորեցուցիչ չի հիմնական դրամագլուխ կազմելը, սակայն և այնպես, յուրաքանչյուր ընկերություն, յեթե ցանկանում է բացի առևտրից, զբաղվել նաև վորևե այլ գործունեությամբ, որինակ՝ հիմնել կամ կապալով վերցնել վորևե արտադրություն (ջրաղաց, յուղագործարան և այլն),—ապա այդպիսի ընկերությունը պիտի մտածի հատուկ դրամագլուխ ստեղծելու մասին։ Առանց հիմնական դրամագլխի, վոչ մի դեպքում չի կարելի զբաղվել վորևե արտադրությամբ կամ գործով, բացի առևտրից։

Այսպիսով ուրեմն, յավ աշխատող սպառողական ընկերությունը, համենայն դեպս, պիտի ունենա սեփական կապիտալի յերեք տեսակն էլ (հիմնական, փայատիրական և հատուկ)։ Բացի այդ, շատ քիչ է պատահում, որ ընկերությունն առանց փոխառությունների իր գործերը վարի, իսկ այժմ այդպիսի ընկերություններ բնավ չկան։ Բացի այս ամենից՝ յուրաքանչյուր ընկերություն կարող է դրույքներ ընդունել։

Մենք գիտենք, որ այդ բոլոր՝ թե սեփական և թե փոխառական միջոցները վորպես դրամ (գանձարկղում), վորպես ապրանք ու մթերք, վորպես արտադրական ու այլ ձեռնարկություններ ընկերության մոտ գտնվում են շրջանառության մեջ.

ուստի հասկանալի չէ, որ ոչ մի՝ նույնիսկ ամենափոքր ընկերություն չի կարող առանց բոլոր միջոցների ու գործարքների կանոնավոր հաշվեառման՝ կառավարվել։ Դրա համար էլ կանոնադրությունը սպառողական ընկերություններին պարտավորեցնում է սպառողական կոոպերատիվների կենտրոնի—Հայկոոպի (հոդ. 51) մշակած ձևերով ունենալ հաշվառք կամ՝ հաշվապահություն և հաշվետվություն։

Այդ ձևերը շատ պարզ են և միևնույն ժամանակ՝ սպառողական ընկերության տնտեսության բոլոր ճյուղերի հաշվառքը պահելու համար՝ միանգամայն բավարար։ Կանոնավոր հաշվապահության պահանջը որևէ ընկերության կողմից չկիրառելը, կարող է կոոպերատիվ բարձրագույն որգաններին հարկադրել՝ փակելու այդպիսի ընկերությունը, որպես իր կանոնադրությունը խախտողի։ Ուստի՝ ընկերության հիմնադիրները, նախքան առևտրական գործարքների ձեռնարկելը, պիտի գտնեն հաշվապահությունը կանոնավոր կերպով տանող համապատասխան մարդ և միությունից ստանան բոլոր անհրաժեշտ մատյաններն ու բլանկները։

Յուրաքանչյուր սպառողական ընկերություն պարտավոր է իր տարեկան գործունեության հաշիվը կազմել, որի մեջ պիտի մատնանշված լինեն.—

1) Զանազան անձանց վրա ի՞նչ գումարի ապրանք, նյութեղեն, դրամ և ստանալիք ունի ընկերությունը, որքա՞ն են նրա դրամագլուխները, ո՞ւմ և որքա՞ն է ինքը պարտք, ընկերությունը վաստա՞կ է արել, թե՞ վնաս (այս տեղեկությունների գումարը կազմում է ընկերության հաշվեկշիռը)։

2) Հաշվետու տարում որքա՞ն գումարի ապրանքներ են գնված ու վաճառված։

3) Ընկերությունն ի՞նչ ծախքեր է արել և ի՞նչ հասույթներից են գոյացել այդ ծախքերը։

4) Մաքուր վաստակը բաշխելու համար վարչությունն ի՞նչ ձև է առաջարկում ընկերությանը։

5) Տարվա ընթացքում ի՞նչ փոփոխության են յենթարկվել փայատիրական դրամագլուխը և փայատերերի թիվը (հոդ. 54)։

Տարեկան հաշվետվությունը կազմվում է առ 1-ն հոկտեմբերի (անտեսական տարվա սկզբին)։

Սպառողական Ընկերության գործառնական տարին համարվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ (հոդ. 52)։

Տարեկան հաշվետվությունը վարչության կողմից կազմվում է առ 1-ն հոկտեմբերի, ապա հաշվետվությունը ստուգում է վերատուչ հանձնաժողովը, որ հաշվետվության վրա նրա կանոնավոր կազմված լինելու մասին գրում է իր յեզրակացությունները։ Այս բոլորը պիտի կազմված լինեն նոյեմբերի 15-ից ոչ ուշ և առհասարակ ոչ ուշ, քան յերկու շաբաթ առաջ ընդհանուր ժողովից, որը հաստատելու յե հաշվետվությունը։ Այդ յերկու շաբաթվա ընթացքում հաշվետվությունը, ինչպես նաև բոլոր մատյաններն ու փաստաթղթերը պիտի տրամադրվեն ընկերության անդամներին, որպեսզի յուրաքանչյուր փայատերը նախորոք կարողանա ծանոթանալ, արդյոք կանոնավո՞ր է կազմված հաշվետվությունը, արդյոք տարվա ընթացքում վարչությունը կանոնավո՞ր է աշխատել։ (հոդ. 55)։

Ընդհանուր ժողովը հաստատելով հաշվետվությունը, պիտի վարչի վաստակի բաշխման կամ վնասները շիջելու միջոցների հարցը-նայած թե ընկերության գործունեությունը ինչ հետևանք է տվել։

Քան կանոնադրության, ընկերությունը մաքուր վաստակից ոչ պակաս 40 (40 տոկոս) կոպ. ուրբլուց, պիտի հատկացնի հիմնական դրամագլխին։ Մաքուր վաստակի մնացած մասն ընդհանուր ժողովն իր հսկողությամբ կարող է բաժանել, սակայն կանոնադրությունը (հոդ. 57) նախատեսում է մաքուր վաստակից հատկացումներ անել հետևյալ նպատակների համար.—

1) Փայավճարներին տոկոսներ տալ ոչ բարձր բանկային միջին տոկոսներից.

2) Ընկերության հատուկ դրամագլուխներ կազմել և լրացնել.

3) Զանազան կուլտ-լուսավորական ձեռնարկումների աժանդակել և

4) Ընկերության անդամներին՝ վերցրած ապրանքների և հատուցուն գներով հանձնած մթերքների համար՝ պարգևատրել (հոդ. 57)։

Փայերի և հատուկ դրամագլուխների տոկոսների մասին մենք արդեն խոսեցինք։ Կուլտ-լուսավորական ձեռնարկումների հատկացումների մասին յերկար խոսելու կարիք չկա, նկատի ունե-

նալով, վոր սպառողական ընկերության նպատակը վոչ միայն իր անդամների նյութական բարեկեցությունը, այլ և նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնելն է:

Մի քանի խոսք պիտի ասել միայն չորրորդ կետի —մաքուր չաստակից անդամներին՝ վերցրած ապրանքի և ընկերությանը հանձնած մթերքների համար՝ պարգևատրելու մասին:

Ինչպե՞ս կարող է սպառողական ընկերությունը նպաստել իր անդամների նյութական բարեկեցության բարձրացմանը: Պիտի իմանալ, վոր սպառողական ընկերությունները գլխավորապես զբաղվում են գործարանային ապրանքների վաճառքով և իրենց անդամների տնտեսություններում վերամշակվող մթերքների գնումներով,—այլ կերպ ասած՝ սպառողական ընկերությունները իրենց անդամների համար փոխարինում են վաճառականներին և ապրանքատուներին:

Աշխարհակալ—կուլակի փոխարեն, վորն իր գնորդներին վաճառելիս քաշի ու կշիռի մեջ խաբում է, վոր նրանց վրա սպառում է ամեն տեսակ փտած ու անպետք ապրանքներ—սպառողական ընկերությունը միայն լավ վորակով ապրանքների առևտուր է անում, լրիվ չափով ու մաքուր քաշով բաց թողնում ապրանքն ու դրանով իսկ բարելավում է իր գնորդների նյութականը:

Սակայն՝ բացի անդամներից, սպառողական ընկերությունից առևտուր կարող են անել նաև վոչ անդամները: Ինքնին հասկանալի է, վոր սպառողական ընկերությունը չի կարող իր գնորդների մի մասին (անդամներին) բաց թողնել լավ վորակի ապրանք, մյուս մասին (վոչ անդամներին)՝ վատ վորակի. այնպես վոր՝ այդ տեսակետից վոչ մի տարբերություն չի կարող լինել անդամի և կողմնակի գնորդի միջև:

Համենայն դեպս, մի տարբերություն պիտի լինի, վորովհետև ընկերության անդամները մուծում են մուտքի վճար ու փայավճարներ և նույնիսկ պարտավորվում են լրացուցիչ պատասխանատվությամբ, մինչդեռ վոչ անդամները վոչինչ չեն մուծում և վոչ մի պատասխանատվությամբ էլ չեն պարտավորվում:

Առաջին հայացքից կարող է թվալ, վոր սպառողական ընկերության անդամներին շահագրգռելու ամենաուժեղ միջոցը — այդ անդամներին, քան վոչ անդամներին, ավելի աժան ապրանք

ծախելն է, այսինքն՝ ապրանքների վաճառելի գնից անդամներին դեղչ անելը: Այդպես վարվել են շատ սպառողական ընկերություններ: Սակայն գործնական կյանքում պարզվեց, վոր դժվար է վորոշել, թե անդամներին վաճառելիս ի՞նչ գիջում պիտի անել—, վորովհետև դժվար է նախորոք վորոշել, թե ընկերությունն ինչպիսի վաստակ կունենա:

Վորպեսզի տարբերություն դրվի մի կողմից՝ սպառողական ընկերության անդամների, մյուս կողմից՝ կողմնակի գնորդների միջև, հանձնարարվում է սպառողական ընկերության ստացած վաստակի մի մասը բաշխել անդամ-փայատերերին, նրանց՝ ընկերությունից գնած ապրանքների քանակի համեմատ:

Այսպիսով, այս ձևով էլ անդամ-փայատերերին ապրանքն ավելի աժան է նստում, քան վոչ անդամներին: Սակայն այս դեպքում անդամները չահագրգռված են, վոր ընկերության գործերը լավ գնան, վոր ավելորդ ծախքեր չլինեն, վոր վաստակ լինի, վորովհետև վաստակից նրանք միայն կարող են գիջում, կամ տարած ապրանքի համար պարգև ստանալ:

Խոսելով անդամ-փայատերերի ընդհանուր ժողովին յենթակա հարցերի քննության մասին, մենք մատնանշեցինք, վոր ընդհանուր ժողովը բաշխում է ստացած մաքուր վաստակը, սահմանում է վնասներ չիջելու, հանդցնելու կարգը: Սակայն կանոնադրությունը, ինչպես վաստակի բաշխման, նույնպես և վնասների չիջեցման համար տալիս է վորոշ ցուցմունքներ: Ընկերության շրջանառության հետևանքով ստացված վնասը ծածկվում է հիմնական դրամագլխի գումարներից, իսկ նրա չբավարարելու դեպքում՝ պարտավորեցուցիչ փայավճարներից: Դրա հետևանքով՝ նվազած պարտավորեցուցիչ փայավճարները լրացնելու համար ընդհանուր ժողովը ժամանակ և նշանակում: Եթե այդ միջոցով վնասը չի ծածկվում, ապա ընդհանուր ժողովը պակասորդ գումարը հավասարապես բաժանում է բոլոր անդամների մեջ (լրացուցիչ պատասխանատվություն) և ժամանակ նշանակում յուրաքանչյուր անդամին վոչ ավելի, քան տարվա վերջը, մուծելու համար իրենց հասանելիք վճարը: Եթե անդամներից վորևե մեկը հրաժարվում է վճարել իր բաժինը, ապա վարչությունը նրանից պահանջում է դատարանական կարգով:

Եվ յեթե անդամների ամբողջ պատասխանատվությունն անգամ չի բավարարում վնասները ծածկելու համար,—ապա ընդհա-

նուր ժողովը կամ նոր լրացուցիչ վճարումներ և սահմանում, կամ վորոշում է դադարեցնել ընկերության գործունեությունը (լուծարքի յենթարկել)։

ԳԼՈՒԽ 6.

ՅԵ՞ՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉՊԻՍԻ ԿԱՐԳՈՎ Ե ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախընթաց գլուխը մենք վերջացրինք, ցույց տալով, վոր սպառողական ընկերությունն ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է իր գործունեությունը դադարեցնել։ Այդ, այսպես ասած՝ ընկերության ինքնակամ մահն է՝ իր իսկ անդամների ցանկությամբ։ Սակայն բացի այդ, ընկերության գործունեությունը կարող է դադարեցվել նաև հետևյալ պատճառներով.—

1. Յեթե ընկերության անդամների թիվը պակաս կը լինի այն թվից, վորպիսին սպառողական ընկերությունների միությունը վորոշել է տվյալ վայրի համար, վորը մատնանշված է կանոնադրության 9-րդ հոդ. 2-րդ ծանոթության մեջ.

2. Յեթե ընկերությունն իր պարտքերը վճարելու համար անանկ կը հայտարարվի.

3. Յեթե ընկերությունը կչեղվի կանոնադրության մատնանշած նպատակներից կամ կընթանա պետական շահերին հակառակ (հոդ. 60)։

Ընկերության փակելը (լուծարքը) կարող է հանձնարարվել վարչության կամ հատուկ հանձնաժողովի, վորի անդամները կանոնադրությամբ յենթարկվում են վարչության անդամների համար սահմանված բոլոր կանոններին։ Յերբ ընկերությունը փակվում է անանկության պատճառով, լուծարքի համար նշանակված հանձնաժողովի կազմը վորոշում է դատարանը։ (հոդ. 61, 62)։

Ընկերության գործունեության դադարեցման համար ընդհանուր ժողովի կայացրած վորոշումը տպագրվում է տեղական լրագիրներում և հայտնվում է սպառողական ընկերությունների գրանցման հանձնաժողովին (Ներքսաժողկոմատին կից նահանգական որգան)։

Լուծարքի հանձնաժողովը (կամ վարչությունը) ընկերության գործերի դադարեցնելն սկսում է նրա պարտքերը վճարելուց։ Յերբ բոլոր պարտքերը վճարվում են և լուծարքի հաշվեհ-

վությունը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից, այդ ժամանակ մնացյալ հանձնաժողովը ձեռնամուխ և լինում անդամներին վերադարձնելու պարտավորեցուցիչ փայերը, յեթե, ի հարկե, մինչ այդ ընկերությանը մնում է մի վորևե դույլ։

Յեթե ընկերությունն ունի վիճելի կամ այնպիսի պարտքեր, վորոնց ժամկետները տակավին չեն լրացել,—ապա լուծարքի հանձնաժողովը պարտավոր է դատարանին հանձնել այդ պարտքերի համապատասխան գումարը։

Լուծարքի հանձնաժողովի անդամները, լուծարքի այս կանոնները խախտելու համար, ըստ Քաղաքացիական Որենսգրքի 115-րդ հոդվ., ամբողջ կազմով պատասխանատու են ինչպես ընկերության, նույնպես և նրա պարտատերերի առաջ (հոդ. 64)։

Բոլոր պարտքերը վճարելուց և անդամներին փայավճարները վերադարձնելուց հետո, հանձնաժողովը կազմում է հաշվետվություն, վորը վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությամբ ներկայացվում է ընդհանուր ժողովին ի հաստատություն։

Յեթե ըստ լուծարքի հաշվետվության՝ ընկերությանը դարձյալ մնում է վորևե դույլ,—ապա ընդհանուր ժողովի վորոշման համաձայն, նա հատկացվում է կամ կոոպերատիվ շինարարության, կամ վորևե այլ հանրօգուտ նպատակների (հոդ. 65)։

Ընդհանուր ժողովի կողմից հաշվետվությունը հաստատելուց հետո, ընկերության գործունեության մասին հայտնվում է սպառողական ընկերությունների գրանցման հանձնաժողովին. այդ մասին հայտարարվում է նաև տեղական լրագիրներում (հոդ. 66)։

Ի հարկե, ընկերության գործունեությունը բոլորովին դադարեցնելն այնքան անցանկալի յերևույթ է, վոր բոլոր միջոցները պիտի ձեռք առնել, այդ բանը չթույլ տալու համար։

Շատ սպառողական ընկերությունների համար,—մանավանդ սակավազորների,—առանձին դեպքերում կարող է վոչ թե փակելու անհրաժեշտության, այլ իրենց գործն ընդարձակելու և ամրապնդելու նպատակով՝ ուրիշ ընկերությունների հետ միանալու հարց լինել։

Սպառողական ընկերություններին կանոնադրության 67-րդ հոդվածով այդպիսի միացման իրավունք տրվում է։

ԳԼՈՒԽ 7.

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆ Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԻՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նախընթաց ԷՋերում մենք մատնանշեցինք սպառողական ընկերության կանոնադրության հիմնական կետերը, որոնք պարտավոր է իմանալ ընկերության յուրաքանչյուր անդամ: Կանոնադրության այդ կետերում խոսվում է ընկերության նպատակների ու առաջադրած խնդիրների, նրա իրավունքների ու պարտականությունների, նրա անդամների կազմի և նրանց իրավունքների ու պարտականությունների, ընկերության կառավարող ու վերահսկող որգանների, ընկերության միջոցների և վաստակի բաշխման ու վնասների չիջեցման, ընկերության գործունեության դադարացման մասին:

Գրքույկիս յուրաքանչյուր ընթերցող, հավանորեն կասի, որ նրա մեջ գրածները սպառողական ընկերության յուրաքանչյուր անդամ իրոք որ՝ պիտի իմանա: Սակայն, կարելի՞ է ասել, որ այս գրքույկը կարդացողն այլևս կանոնադրություն կարդալու պետք չունի:

Ի հարկե՝ վո՛չ, և այդ չի կարելի ասել վոչ միայն այն պատճառով, որ միայն տվյալ սպառողական ընկերության կանոնադրության մեջ է գրված, թե նրա անդամն ինչ փայավճար պիտի վճարի, ինչպիսի լրացուցիչ պատասխանատվություն է կրելու նա հանդեպ իր ընկերությանն ունեցած պարտավորությունների և այլն:

Այս գրքույկը չի կարող փոխարինել ընկերության կանոնադրությանը և այն պատճառով, որ նա չի ընդգրկում կանոնադրության շատ մանրամասնությունները, որպիսիք պիտի իմանա ընկերության անդամը:

Այդ բոլորը մենք բաց ենք թողել, որպեսզի գրքույկը չբեռնաբեռնենք ավելորդ մանրամասնություններով:

Գրքույկը հետապնդում է վոչ այնքան այն նպատակը, որ փոխարինի սպառողական ընկերության կանոնադրությանը, այլ որպեսզի ցույց տա, թե որքան անհրաժեշտ է ընկերության յուրաքանչյուր անդամին իմանալ կանոնադրությունը և մեր նպատակն է յեղել ոգնել՝ հասկանալու այն:

Հետևապես, ի պատասխան ներկա գլխի վերնագրին՝ պիտի ասենք.

Սպառողական ընկերության յուրաքանչյուր անդամ, որպեսզի գիտակցաբար վերաբերվի ընկերության գործերին, որպեսզի պարզ գաղափար կազմի իր իրավունքների ու պարտականությունների մասին, որպեսզի իսկական կոոպերատոր լինի, որ գիտակցի, թե կոոպերատիվը ստեղծվում է՝ սոցիալիստական շինարարության սկզբունքներն իրագործելու համար,— սպառողական ընկերության յուրաքանչյուր անդամ իր ընկերության կանոնադրությունը պիտի իմանա ամբողջովին:

Իսկ ընկերության վարչությունը պիտի հոգ տանի, որ իր կանոնադրությունը յուրաքանչյուր անդամ ունենա և ինչպես հարկն է՝ յուրացնե այն:

ՅԱՆԿ

Եր.

1. Ինչո՞ւ պիտի իմանալ կոոպերատիվի կանոնագրությունը . 3
2. Ինչո՞ւ համար է կազմակերպվում սպառողական ընկերությունը 5
3. Ո՞վ կարող է լինել ընկերության անդամ, վորո՞նք են ընկերության անդամների իրավունքներն ու պարտականությունները 7
4. Ո՞վ և ի՞նչպես է կառավարում ընկերությունը և ի՞նչպես են ստուգվում ընկերության գործերը 12
5. Վորո՞նք են ընկերության տրամադրության տակ լեզած միջոցները և ի՞նչպես է շիջում (հանգցնում) վնասները . . 20
6. Յե՞րբ և ի՞նչպիսի կարգով է դադարեցվում ընկերության գործունեությունը 28
7. Սպառողական ընկերության անդամն ի՞նչ պիտի իմանա իր ընկերության կանոնագրությունից 30

Ազգային գրադարան
NL0208035

3433

21

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

334.5
Ս-54